№ 99 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 8 1908 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 8 № 99

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Արսէն աւագ-քահանայ և տիրուհի Աննա Բագրատունիք խորին վշտով ու կսկիծով յայտնում են ծնողներին, ազգականներին և պաշտօնակիցներին ու ծանօթներին իրանց անմոռանալի փեսայի՝ առևտրական դպրոցի ուսուցիչ

Գրիգոր Քրիստափորեան ՎԱՆՑԵԱՆԻ

անժամանակ յանկարծամահը

Ամբիծքը՝ հինգշաբթի, մայիսի 8-ին, առաւօտեան 10 ժամին, Մողնու եկեղեցական սենեակում, այնտեղից նոյն եկեղեցին՝ պատարագի. Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը նոյն օրը։

Նախազգուշացում

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ **Д. З. Сараджевъ**

ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱ ՍԵՆԵԱԿԻՑ

Նորերս ի վաճառ է հանվել օղի (столовое вино)

„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ" „Т-во Г. М. Сараджевъ"

ֆիրմայով և մերին կատարելապէս նման էտիկետներով, նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, մեր ֆիրմայի հռչակով օգտվելու նպատակով։

Թողնելով դատարանին ապրանքի տարածման այդպիսի մի ձևի գնահատութիւնը, գրասենեակը խնդրում է յարգելի հասարակութեան ուշադրութիւն դարձնել ֆիրմայի էտիկետների վրա անուան և հօրանուան սկզբնական **„Դ. Զ." „Д. З."** տառերին, նոյնպէս գործարանի դրօշմի՝ «այծեամը ժայռի վրա»։

(օ. մ.) առ. 25—16

ՀՐԱՒԷՐ

Մողնու եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը այսու յայտնում է ծխականներին, որ կիրակի, մայիսի 11-ին, ժամը 12-ին, պատարագից յետոյ եկեղեցու մէջ կայանալու է ծխական ընդհանուր ժողով։

Քննութեան առարկաներն են.

1) 1906/7 Թ. հաշւետւութիւնը։

2) Զեկուցում Գայիանեան դպրոցի այժմեան դրութեան մասին (տնտեսական և ուսումնական)։

3) Ընտրութիւն հոգաբարձութեան չորս անդամի առաջիկայ եռամեակի համար (1908—1911 Թ.)։

4) Ընտրութիւն վերստուգիչ յանձնաժողովի։

5) Զեկուցում դպրոցական շէնքի կառուցման մասին։

(հ. շ. կ.) առ. 3—1

ՀՐԱՒԷՐ

Ներկայ տարվայ մայիսի 11-ին, կիրակի, ժամը 12-ին, Թիֆլիսի հայոց բոլոր եկեղեցիներում լինելու է երեք-երեք երէցփոխանպատուիրակների ընտրութիւն, որոնք որոշված ժամանակին մասնակցելու են ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ մի պատգամաւորի ընտրութեանը. ուստի սրանով հրաւիրում ենք արական սեռի 25 տարեկանից սկսած բոլոր ծխականներին, որ իւրաքանչիւր ոք նոյն օրն և ժամին շտապէ իր եկեղեցին ընտրութեանը մասնակցելու։ Տափի Թաղի ծխականները ժողովվելու են քաղաքիս ս. Նշան եկեղեցու ուսումնարանի դահլիճը։

Գործակալներ Թիֆլիսի

Ա. մասի՝ Գրիգոր աւ.-ք. Մանդակունի

Բ. մասի՝ Ղևոնդ քահ. Մամիկոնեան

(հ. շ. կ.) առ. 3—1

ՀՐԱՒԷՐ

Ս. Էջմիածնի սինօդի հրամանի համաձայն և Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեամբ յայտնվում է ի գիտութիւն Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխականներին, որ սոյն մայիսի 11-ին, ժամը ուղիղ 12-ին, յիշեալ եկեղեցում նշանակված է ծխական ժողով, ուր հրաւիրվում են ներկայ լինել արական սեռի պատկանող այն ծխականները, որոնց հասակը պակաս չէ 25 տարեկանից, ընտրելու երեք երէցփոխպատուիրակներ, որոնք Թեմիս միւս պատուիրակների հետ գումարվելով սեպտեմբերի 21-ին առաջնորդարանում՝ ընտրելու են Թեմի կողմից մի պատգամաւոր ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեանը մասնակցելու համար։

Սիմէօն աւ. քահ. Ջմշկեան

(չ. հ. շ.) առ. 3—1

ՈՒՐԲԱԹ, ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ

Ժողովարանի դահլիճում

Հայոց Ազգագրական ընկերութեան նախաձեռնութեամբ

Սիմէօն Յակոբեանը

կը դասախօսէ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ

մասին, նրա ծննդեան հարիւրամեակի առիթով։

Տեղերի գինը՝ 1 ր., 50 կ. և 25 կ.

Տոմսակները կարելի է ստանալ պ. Ե. Ծատուրեանի խանութում (Դվորցովայա) և Ժողովարանի շվէյցարի մօտ։

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան

(հ. ու.) առ. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Մայիսի 8-ին

պ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների և հիւրերի համար

կը կայանայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Սկիզբն է երեկոյեան ժամը $8^1/_2$-ին

(հ.) առ. 1—1

ԹԻՖԼԻՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է, որ ընդունելութեան քննութիւնները նախապատրաստական դասարանի միջին և բարձր բաժանմունքներում, ինչպէս և 1—6-րդ դասարաններում կը կայանան այս մայիսի 28-ին, 29-ին և 30-ին։ Քննութիւնների սկիզբն է առ. ժամը $8^1/_2$-ին։ Նախապատրաստական դասարանի ստորին բաժանմունքում ընդունվում են առանց քննութեան 7—9 տարեկան երեխաները։

(8 և 11) առ. 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

Մայիսի 20-ից կը վերսկսի հիւանդների ընդունելութիւնը կովկասեան հանքային ջրերում։

Հասցէն՝ Էսսէնտուկի, Верхняя Курсовая ул.. дача Введенской.

(ե. հ. կ.) առ. 10—1

Հինգշաբթի, մայիսի 8-ին

Թիֆլիսի ժողովարանի ամառային շինութեան մէջ

ՅՕԳՈՒՏ

Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան

տեղի կունենայ

ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ

վիճակախաղ-ալեգրիով, սինեմատօգրաֆ

Ս. Օ. ԻՎԱՆԻՑԿՕՅԻ

ՊԱՐԵՐ, օղակի խաղ, ֆրանսիական կարթի խաղ, չաստուածուհու գնացք ծաղիկներով, երեխաների գնացք դրօշակներով և երեխաների խաղեր ղեկավարութեամբ տիկին Վ. Ս. ՋՄՇԿԵԱՆԻ

Երկու խումբ երաժշտութիւն

Սկիզբն է ժամը 4-ին ցերեկվայ

Մուտքի վճարը մեծերի համար 25 կ., երեխաներին 15 կ.

(կ. հ.) առ. 2—2

ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ

Մենք մի քանի տեղերից ստացանք տեղեկութիւններ հետևեալ բովանդակութեամբ.

— Գիւղացիները հող չը գնեցին այն պատճառով, որ նրանց հաւատացրել են, թէ հողը պէտք է դառնայ նրանց սեփականութիւն առանց որևէ փողի, առանց որևէ վճարի։ Նրանք չը գնեցին, և հողը ընկաւ մի ուրիշ մասնաւոր մարդու ձեռք, որը տալիս է նոյն հողը շահագործութեան աւելի ծանր պայմաններով, քան նախկին տէրերը։

Եթէ այդպիսի լուրեր դեռ կարող էին մի և երկու տարի սրանից առաջ որևէ արդարացնող փաստաբանութիւն ունենալ իրանց գոյութեան համար, գոնէ արտաքին կողմից, այժմ նրանք բոլորովին զուրկ են որևէ հիմքից և միայն մոլորեցնում են հողազուրկ կամ սակաւահող գիւղացիներին, օրօրելով նրանց խաբուսիկ երազներով և յետ պահելով նրանց հող գնելու դիտաւորութիւնից։

Մեզ յայտնի են դէպքեր, թէ ինչպէս հողազուրկ հայեր ձեռքից բաց են թողել ծախու էժանագին հողերը և դեռ այժմ էլ տատանվող վիճակի մէջ են միւս ազատ հողերի վերաբերութեամբ։

Երբ որ գիւղացին անվճռական է հողի գնման վերաբերութեամբ, որովհետև չը գիտէ հողի որակութիւնը և տեղական տնտեսական պայմանները, մենք բոլորովին հասկանում ենք նրա տրամաբանութիւնը։ Եւ մենք ինքներս կը յորդորէինք նրան մանրամասնօրէն, հանգամանօրէն ուսումնասիրել հողը և յետոյ գնել նրան, նոր տնտեսութիւն կազմակերպելով նրա վրա։ Մենք նոյնպէս կը յանձնարարէինք աշխատել գնելու հողը ձեռնտու պայմաններով և վաշխառուների ձեռքը չընկնելու։

Բայց երբ դրանք չեն երկրագործի մտատանջութեան և անվճռականութեան շարժառիթները, այլ այն, որ նա հաւատ ունի, թէ հողը պէտք է խլվի հողատէրից առանց որևէ վճարի կամ վարձատրութեան, այն ժամանակ նա ոտք է դնում յուսախաբութեան մի ճանապարհի վրա։

Մենք հասկանում ենք, որ պետութիւնը կարող է ձեռք բերել մասնաւոր հողերի մեծ տարածութիւններ և յետոյ տալ նրանց գիւղացիներին իբրև պետական հողեր օգտվելու որոշ պայմաններով։ Բայց քանի որ այդ չը կայ, իսկ հողը իրապէս ընկնում է օտար շահագործողների ձեռքերը, պէտք է այնպիսի սխալներ չանել, որ յետոյ դժուար լինի նրանց ուղղելը, որովհետև հողերը այժմ համեմատաբար էժան են, իսկ ժամանակով նրանք աւելի ու աւելի կը թանգանան։

Այո, զգուշութիւններ պէտք է գործ դնել, որպէսզի սխալներ չը կատարվեն հողերի յատկութեան վերաբերութեամբ. բայց եթէ հողը արգաւանդ է, բարեբեր և շրջակայ տնտեսական պայմանները նպաստաւոր են, չը պէտք է կանգ առնել հողի գնման հարցի առաջ և նրան պէտք է լուծել դրական կերպով։

Այն, ինչ որ գիւղացին կը գնէ այսօր, կը դառնայ մշտական աղբիւր աշխատանքի համար, ազատ վտանգից և կողմնակի քմահաճոյքներից։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլիս, 7 մայիսի

Երէկ ռուսաց դեսպանատունը Բ. Դրան ուշադրութիւնը հրաւիրեց Վանի դէպքերի առիթով, ուր, հիւպատոսական հաղորդագրութիւնների համաձայն, իշխանութիւնները, պահանջելով հայերից յանձնել հայ յեղափոխականներին և ֆիդայիներին, շրջապատել են հայկական թաղը զօրքերով և 12 լեռնային թնդանօթներով, սպառնալով քարուքանդ անել թաղը ամբողջութեամբ։ («Հ. Գ.»)

Վիէննա, 7 մայիսի

«Կոր. Բիւրօյին» Կ. Պօլսից հեռագրում են, որ Վանի կրիտիքական դրութիւնը սուր կերպարանք է ստանում։ Շուկան փակված է։ Քաղաքի հայկական մասը շրջապատված է զօրքերով։ Պահանջում են յանձնել կոմիտէջիներին և զէնքերը։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 6 մայիսի

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Բաղդադում երևան են հանվել ժանտախտի 4 դէպք, որոնցից մէկը վերջացել է մահով։ («Հ. Գ.»)

Թաւրիզ, 7 մայիսի

Սօվուջ-Բուլաղից ստացված տեղեկութիւնների համաձայն, քիւրդերի յայտնի պարագլուխներ Բայազիթ-աղայի և Փիր-աղայի միջև տարաձայնութիւն է ծագել։ Վերջինս անցել է Պարսկաստանի կողմը և եկել է Սօվուջ-Բուլաղ՝ նահանգապետի մօտ։ («Հ. Գ.»)

—

Աջակողմեանների կողմից Կովկասի վերաբերմամբ յարուցված հարցապնդման առիթով, «Ռուս. Սլ.» լրագրի ասելով, Կովկասի Փոխարքայի դիւանատունը ուղարկել է իր պատասխանը մինիստրութեան, որտեղ ի միջի այլոց մատնանշված է, որ հայրենասիրականների սպանութիւնները կազմում են 51 տոկոս, իսկ բնիկ տեղացի յեղափոխականներինը հայրենասիրականների ձեռքով՝ 49 տոկոս։

Բացի դրանից ազատագրական շարժմանը մասնակցելու համար պատասխանատուութեան ենթարկվողների խոշոր մեծամասնութիւնը կազմում են ռուսները։

Թիֆլիսի նահանգի պատգամաւոր Չխէիձէն միենոյն հարցի համար ահագին նիւթեր է հաւաքել, որոնք պէտք է հիմք ծառայեն հակահարցապնդումի համար։

Լուր է պտտում, որ մինիստրական կաբինետի անդամներից շատերի դրութիւնը, բացի Պ. Ա. Ստոլիպինից, բաւականին խախտված է։ Պետական Դումայի սեսսիան աւարտվելուց յետոյ փոփոխութիւններ կը կատարվեն։ Նախ հրաժարական կը տայ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը։ Նրա փոխանորդ են համարում Դումայի անդամ Մարկով 1-ին, իբրև երկաթուղային գործին լաւատեղեակ։ Նրանից յետոյ շրջաններում հաւանական են համարում Վ. Ն. Կոկօվցեվի հրաժարականը։ Դումայի վերջին միջադէպից յետոյ նրա դրութիւնը համարվում է խախտված։ Բարձր «խաւերում» համոզված են, որ այդ միջադէպը վերջացած համարելու համար անհրաժեշտ էր, որպէսզի նա Դումայում յետ վերցնէր իր խօսքերը։(«Зв.»)

—

Լուր է պտտում, որ Դումայի մի խումբ ձախակողմեան պատգամաւորներ մտադիր են առաջարկութիւն անել Դումայում Պուրիշկեվիչի մտաւոր ընդունակութիւնները քննութեան ենթարկելու։ Նրանք գտնում են, որ Դումայում նրա բռնած դիրքը, միջադէպեր սարքելու սէրը հիմք են տալիս կասկածելու այդ մասին։

—

Այն համայնքը, որին պատկանում է և Դումայի անդամ Բուլատը, ամբողջովին ենթարկված է 40-ական կոպէկ տուգանքի «համայնական վարչութեան շէնքը» անպատւելու համար, որովհետև գիւղացիները հաւաքվելով այնտեղ՝ մշակել են իրանց պատգամաւորի համար հրահանգներ։

(«Кс.»)

—

Ռուսաստանի եկեղեցու գործերի համար կազմված մասնաժողովի նիստում, ապրիլի 30-ին, ընդունված է մի օրինագիծ, որի հիման վրա ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ անհետ կորչող անձանց ամուսնալուծութեան համար 5-ամեայ բացակայութիւնը կրճատվում է 3 տարով։

—

Վիէննա, 7 մայիսի

«Կոր. Բիւրօյին» Կ. Պօլսից հեռագրում են, որ անցեալ ուրբաթ օրը, երեկոյեան, 40 ալբանացիներից բաղկացած մի հրոսակախումբ ներս խուժեց ծովափնեայ Սանտիկվարանտա քաղաքը, ջարդեց հեռագրական գրասենեակը, մաքսատունը և մի քանի խանութներ և փախաւ կողոպտելուց յետոյ, որ տևեց մի քանի ժամ։ Օտարազգի հիւպատոսարանները և նաւային ընկերութիւնների գործակալութիւնները անվնաս են։

Դէպքի տեղը մեկնեցին կառավարական զօրքերը։ («Հ. Գ.»)

Վիէննա, 6 մայիսի

Ներքին գործերի մինիստրը բացեց արխիտեկտօրների ութերորդ միջազգային կոնգրէսը, որին մասնակցում են համարեա բոլոր պետութիւնների ներկայացուցիչները։ («Հ. Գ.»)

Պարիզ, 6 մայիսի

Գեներալ դ'Ամադ, գիշերով իր զօրախմբով անցնելու ժամանակ, մոլորվել է ապստամբ ցեղերից մէկի սարքած թակարդում։ Սակայն ֆրանսիական զօրքը թշնամուն վանել է մինչև Բերաբերսկի լեռները, կորցնելով երեք սպանված և 22 վիրաւոր։

(«Հ. Գ.»)

—

Սիմլա, 7 մայիսի

Մայիսի լոյս 4-ի գիշերը բրիտանական առաջապահ զօրքի մի մասը ենթարկվեց մօհմանդների յարձակմանը։ Յամառ կռիւը շարունակվեց ամբողջ 4 ժամ։ Անգլիացիները կորցրին 9 տեղացի սպանված գինւորներ, 24 վիրաւորվածներ. թշնամին ահագին թւով սպանվածներ տուեց։(«Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 7 մայիսի

Բարձրագոյնս հաստատութիւն գտաւ սկզբնական կրթութեան համար 6,900,000 րուբլի յատկացնելու օրինագիծը, որի վերաբերութեամբ իրանց հաւանութիւնը տուին Պետական Դուման և Խորհուրդը։ («Հ. Գ.»)

—

Խարկով, 7 մայիսի

Ներքային հիւանդների հիւանդանոցում ինքնասպանութիւն գործեց ֆիզիքայի յայտնի պրօֆէսօր Պիլչիկօվը։ («Հ. Գ.»)

—

Պրագա, 7 մայիսի

Մայիսի 5-ին կայացաւ ազգային քաղաքական կուսակցութեան կազմած ժողովը՝ քաղաքական դրութիւնը քննելու համար։ Ժողովը վերջանալուց յետոյ, ժողովականները, որոնց թիւը հետզհետէ նրանց միացնող ամբոխի հետ հասաւ 4000 մարդու, դիմեցին դէպի գլխաւոր պօստատունը, ուր սկսեցին աղմկել։ Այստեղ ամբոխը ցոյց սարքեց գերմանական թատրոնի առաջ և նրա վրա քարեր նետեց։ Միջամտեց ոստիկանութիւնը, որին ամբոխը ընդունեց քարէ տարափով։ Ցուցարարներից մի քանիսը սկսեցին կրակել ատրճանակներից։ Վերջապէս աջողվեց ամբոխը ճնշել և ցրել։

(«Հ. Գ.»)

—

Էջմիածին, 1 մայիսի

Մի քանի օր առաջ տեղակալ Սուրէնեան արքեպիսկոպոսը առաջարկութիւն տուեց սինօդին, որ անյապաղ իրան ներկայացվեն Գրիգոր Գառնակերեան, Ղևոնդ Յովակիմեան, Յուսիկ Մովսէսեան, Աշոտ Շախեան եպիսկոպոսների, Սահակ Ամատունի, Եփրեմ Սուքիասեան, Մեսրոպ Տէր-Մովսիսեան, Մատթէոս Մատթէոսեան, Գարեգին Յովսէփեան, Խորէն Մուրադբէգեան, Եղիշէ Ահարոնեան և Զաւէն Մահտեսի-Բարսեղեան վարդապետների «ծառայութեան ցուցակները»։ Մեր եկեղեցու վարչութեան մէջ երկու դէպքումն է միայն ծառայութեան ցուցակ պահանջվում, այն է՝ թեմակալ-առաջնորդ և սինօդի անդամ հաստատել տալու ժամանակ։

Նախընթաց հանգամանքներին նայելով, պէտք է ասենք, որ Սուրէնեանց սրբազանը պատրաստվում է սինօդի անդամներ առաջարկել վերոյիշեալ եպիսկոպոսներից և վարդապետներից մի քանիսին, թէև ինքն ասած է եղել, որ շքանշան պիտի բերել տայ նրանց համար, որի համար նոյնպէս «ծառայութեան ցուցակ» է պահանջվում։ Սրբազանը անշուշտ պիտի առաջարկէ նրանց, որոնց վրա ինքը վստահութիւն ունի և իր տեսակէտով յարմար է գտնում։ Առ այժմ այս իրողութիւնը յայտնում ենք հայ հասարակութեան ի տեղեկութիւն, իսկ երբ մեր ենթադրութիւնը ճշտվի, որ Սուրէնեանց արքեպիսկոպոսը սինօդի անդամներ է առաջարկել, այն ժամանակ կասենք մեր ասելիքը։ Ցուցակի մէջ կան այնպիսիները, որոնք չը պէտք է մտնեն սինօդի անդամների ցուցակի մէջ որոշ պատճառներով։

Ընդհանրապէս տեղակալ Սուրէնեանց սրբազանին խորհուրդ կը տայինք, որ այսպիսի խառն ժամանակում, երբ առանց այն էլ խռոված և պղտորված է մեր կեանքը, նորանոր յուզումների և կրքերի բորբոքման պատճառ չը դառնալ։

Էլպիս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

—

Որքան յաճախ է հոլովվում «երիտասարդութիւն» բառը մեր բերանում, որքան յոյսեր և իղձեր ունենք կապած այդ անունը կրող դասի հետ, որքան կենացներ ու ճառեր վառվռուն գաղափարների շրջանում ապրող այդ տարրի հասցէին, բայց և որքան դառն հիասթափութիւն այդ բոլորի դիմաց։

Սով է ամենուրեք. քաղցած երեխաների ճիչն ու աղաղակը մարդու սիրտ է կտրատում, բայց արձագանք՝ շատ քչերի սրտում։

Գիւղերում երբ դպրոցներ ենք բացել, ուսման ծարաւ մանուկների ձայնից մարդու սիրտ է փառաւորվում, բայց տարվայ կիսից նուաղելով այդ ձայնը՝ դադարում է դեռ ապրիլին չը հասած։

Բարեգործական ընկերութեան ճիւղեր բանալու կարիք է ամեն տեղ, բայց գործելու եռանդ, բանալու միջոց շատ քչերն ունին։

Ո՞ր մէկը թւենք այն անթիւ կարիքներից ու գործերից, որոնք հրամայողաբար լուծումն են պահանջում։ Ցանկացողի, գաղափարականի, սիրտ ու եռանդ ունեցողի համար գործն անսպառ է։

Մասնաւորելով խօսքս, դառնամ Ղզախի գաւառին, որ բաղկացած է 50-աչափ հայ գիւղերից։ Սրանցից քանի գիւղ ունենն իրանց ուսումնարանները։ Ուսումնարան... որպիսի հեգնանք այդ անունը կրող հաստատութեան հասցէին։

Մեր գիւղերի դպրոցների մասին որոշ գաղափար տալու համար վերցնենք հէնց մի օրինակ. վերցնենք 300-ից աւելի տուն ունեցող Աչա-ջուր գիւղը. այս գիւղում սովորում են գիտէ՞ք որքան աշակերտ. միայն և միայն 25 հոգի. դպրոցի բիւջետը 200 րուբլուց դէնը չէ անցնում, որը ուսուցչի (ձեռնարանաւարտ) ռոճիկն է, բայց և որի կէսը հազիւ է հաւաքվում և հասնում նրան. աննախանձելի վիճակ։

Սով է նոյն գիւղում. օգնութիւն չը կայ ոչ մի տեղից։ Այս գիւղից Բագւում և այլ տեղեր ապրող երիտասարդների թիւը 2 հարիւրից անցնում է, որոնց մեծամասնութիւնը ունի նախանձելի վիճակ, բայց թէ ինչ է նրա արածը։

Մօտ 200 տուն ունեցող Ուզունթալա գիւղի նոյնչափ երիտասարդները ինչ արին իրանց գիւղի համար, երբ մեր կոչին արձագանք տուին բոլորովին օտար մարդիկ Բագուից և Քերքիից... Ոչինչ, բառիս բուն նշանակութեամբ։

Արժէ այստեղ մէկ-մէկ թւել իւրաքանչիւր գիւղի երիտասարդութեան պախարակելի վարմունքը։

Հետաքրքրական է իմանալ, թէ մեր երիտասարդները ապա ինչո՞վ են բաւականութիւն տալիս իրանց բուռն գաղափարականութեան, իրանց եռանդի սրարշաւ թափին. ինչո՞վ են մեղմացնում ու հանգստացնում իրանց ազգութեանը ծառայելու սանձակոտոր անձկանքները։

Աւագ շաբաթվայ օրերն են։

Զը՜ռնգ հա զը՜ռնգ. կառքերի բոժոժների ղօղանջներով մեր երիտասարդներն են անցնում Ղզախի քաղաքով դէպի հայրենի գիւղ։ Թաչերում ու վանքերում քէֆ անելու են գնում նրանք. նրանք երգում էլ են. այժմվանից հէնց քէֆները չաղ է. նախանձելի վիճակ։ Վանքումն են արդէն, առատ սեղանների շուրջը բոլորած։

«Շատ խելօք տղայ, շատ լաւ ա ասում, մենք ենք վառը»,—շշնչում են գիւղացիք և նորանոր կենացներով տրամադրվում ու տրամադրում մեր երիտասարդ հերոսներից մէկին, որը մեծ գառն է մորթել, լաւ գինի բերել և տաք-տաք բաժակաճառեր ձօնում սովեալների, դպրոցների, արհեստանոցների և այլ բարենպատակ հաստատութիւնների հասցէին։

Վերջանում է ամեն բան. մթնով ամենքը դառնում են տուն։

Հետևեալ օրը, նշանակեալ ժամին, պատուիրված կառքը նոյն զրընգզրընգոցով գալիս, կանգնում է մեզ ծանօթ երիտասարդի դռանը. երէկվայ սեղանակից գիւղացիները համարեա բոլորն այստեղ են, ուր բարեմաղթութիւնները, «թաք ու փնաք բարով»ները նորից կատարվում են գինու միջոցով։

Կարիքը ստիպում է մեր երիտասարդներին թողնել գիւղը, հեռանալ հայրենիքից դէպի օտարութիւն. նրանք ամեն գործ թողնելով գիւղացիների վրա՝ հեռանում են մարմնով, հեռանում մտքով ու հոգով։ Միակ շաղկապը նրանց և գիւղի մէջ իւրաքանչիւրի հարազատի ու մերձաւորի կարօտն է. հասարակական, ընդհանուր ոչ մի գործ։

Բայց միթէ հէնց այդքան սպասելիքներ ունենք մենք նրանցից։

Որքան ինձ յայտնի է, գաւառիս բազմաթիւ գիւղերից միայն մի քանիսն են չնչին կոպէկների օգնութիւն ստացել իրանց երիտասարդութիւնից։

Մենք չենք կամենում ուրանալ հատ ու կէնտ երիտասարդների գործունէութիւնը, բայց ինչ են այդ մի քանի ծաղիկները անսահման խորշակահար անապատում։

Մեր յօդուածների, մասնաւոր նամակների, կոչ ու հրաւէրների հանդէպ, Ուզունթալայի երիտասարդութեան քարից էլ քար անտարբերութիւնը իրաւունք է տալիս մեզ այս լեզուով խօսել ընդհանուր երիտասարդութեան հասցէին. ով քաջ է ու անձնազոհ, թող հրապարակ գայ գործով և ոչ խօսքով. թող հեռու աշխարհից իր լումաներով միանայ մեզ, երիտասարդական եռանդն ու աւիւնը կորցրածներիս հետ. այն ժամանակ մեր լեզուն ու ոճը փոխած պատրաստ ենք գովելու ու փառաբանելու իրանց։

Զ. Ք. Ալլահեանց

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Կովկասեան զինուորական-նահանգական դատարանին են յանձնված՝ 1) ազն. Իօսիֆ Շատիրաշվիլի և Իօան Բօկուչավա ու գիւղ. Ջանգավաձէ, որոնք մեղադրվում են 1907 թ. դեկտ. 24-ին Քութայիսում, Գրիգոր Արշէվանիձէի վրա յարձակվում գործելու, նրան վիրաւորելու և նրանից 359 րուբլի, ոսկէ ժամացոյցը, դանակը խլելու մէջ. 2) Զուգդ. գ. բնակիչ Շամիլ Բօգավա, որ մեղադրվում է 1907 թ. յուլիսի 1-ին Զուգդիդի մօտ, ճանապարհին, պահակների վրա կրակելու մէջ։

—

Մայիսի 3-ին Թիֆլիսի դատաստանական պալատում քննվեց Միխայիլ Ջօղբեշվիլու քաղաքական գործը, որ մեղադրվում է անլեգալ գրուածքներ տարածելու մէջ։

Մեղադրեալին պաշտպանում էր երդ. հաւ. Բրօդսկին։ Դատարանը Ջօղբեշվիլուն դատապարտեց միամեայ բանտարկութեան։

Ապրիլի 26-ին և 28-ին Թիֆլիսի դատաստանական պալատի նստաշրջանը Սուխում քաղաքում քննեց երկու գործ, մէկը «Սուխումի զինված ապստամբութեան» և, «Սամուրզականի հանրապետութեան»։ Առաջին գործի համար մեղադրվում էին 5 հոգի։

Պաշտպանում էին երդ. հաւատարմատարներ Ալէքսանդրով, Եասէն (Մոսկվայից), Էլիավա (Թիֆլիսից) և Պագավա (Քութայիսից)։

Դատարանը դատապարտեց առաջին գործի վերաբերութեամբ՝ մէկին 4 տարով աքսորի, երկուսին ծանր տաժանակիր աշխատանքների, երեքին 2 տարով բանտարկութեան։

Երկրորդ գործի վերաբերութեամբ դատապարտեց՝ 5-ին մի տարով բանտարկութեան, 13-ին 3 ամսից մինչև 3 տարով բանտարկութեան, 8-ին արդարացրեց։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երևան, 25 մարտի

Ամսիս 15-ին բժ. Յ. Յովհաննիսեանի հրաւէրով կայացաւ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան ճիւղի բացումը և ընդհանուր ժողովի նիստը, ուր և տեղի ունեցաւ վարչութեան անդամների ընտրութիւն։ Ընտրվեցին բժ. Յ. Յովհաննիսեան, Գ. Ահարոնեան, Մ. Մուսինեան և իշխան Յովսէփ Արղութեան, որոնց առաջարկվեց կազմել նախահաշիւ և ներկայացնել ընդհանուր ժողովին։

Այդ օրվայ ժողովի շարունակութիւնը եղաւ ամսիս 20-ին, որտեղ ընտրվեց 5-րդ անդամ տիկին Մ. Միրզոյեանց, իսկ փոխանդամներ՝ պ. պ. Տ. Տէր-Յակոբեան և բժ. Մելիքեան։ Այդտեղ կարգադրվեց և հաստատվեց 1908 թւի նախահաշիւը։ Չը նայելով որ նախահաշւով մուտք նշանակված էր 2000 ր., բայց եկամուտը սպասվում է 3000 ր.։ Բացի այս՝ որոշվեց հին անցեալից մնացած նախկին բարեգործական ընկերութեան մնացած գումարը՝ 2800 ր., որ գտնվում է կենտրոնական խորհրդի մօտ, յետ վերցնել։ Իսկ ելքը առհասարակ պտտում էր դպրոցական նպատակի, աշխատաւորաց տուն հիմնելու, տառապեալներին և այլ այդպիսի կարևոր նպատակների օգնելու շուրջը։ Երևում է, որ մեր հասարակութիւնը շատ սրտանց է կպել բարեգ. ընկերութեան, որովհետև անդամների թիւը օր ըստ օրէ բազմանում է. առաջին ժողովին դրանց թիւը 45 էր, այժմ, ինչպէս իմացանք, 200-ի է հասել։

Մեր կարծիքով վարչութիւնը իր գլխաւոր ուշքը պէտք է դարձնի գաւառների վրա, որովհետև գաւառը դպրոցական, բժշկական օգնութեան և այլ շատ կարիքների մի կատարեալ ծով է ներկայացնում։

Աջողութիւն ու գործելու մեծ եռանդ ենք ցանկանում նորընտիր վարչութեան։

Գ. Աղազարեան

—

Օրդուբաթ, 28 ապրիլի

Հանդամէջ գիւղի և Օրդուբաթ քաղաքի մօտ կայ մի թուրքաբնակ գիւղ Գանձա անունով, ուր կայ մի հայոց սրբավայր՝ ս. Յովհաննէս։ Մեր հասարակութեան մէջ միտք յղացաւ Զատկի երկրորդ կիրակին ուխտաւորութիւն անել՝ գնալ այնտեղ ուխտ. նորընտիր քահանան ձայնակցեց մեզ, և երէկ սրբավայրը լցվեց երկսեռ ուխտաւորներով. գնացի և ես. տեսայ ուխտատեղին աւերակ, աղտոտ, ճաքճաքված։ Պատարագից դուրս գալով մօտեցայ երկու ուխտաւորների տաք վիճաբանութիւնը լսելու, որը բառ առ բառ գրում եմ.

— Ախար ո՞վ է բաշխել այս ուխտատեղին «մուխսակին» Վասօյին։

— Անտէր երկիր է. ով շուտ զարթնում է՝ նա է իրան իրաւանց տէր համարում։

— Շարունակ այստեղ ուխտաւորներ են լինում. ինչո՞ւ ստացված արդիւնքով չեն պահպանում շինութիւնները։

— Հին ասածը լսել ես, որ ասում է. «այս էլ ուտեմ, էլ չեմ ուտի». այսպէս ասելով, եկած արդիւնքը անզգալի կերպով գոլորշիացել է։

— Ինչո՞ւ հոգևոր իշխանութիւնը ուշք չէ դարձնում այս կարևոր հարցին։

— Հանդամէջի տէր-Մարտիրոսի մահից յետոյ այս ուխտատեղին սեփականութիւն է մնացել «մուխսի» Կարապետ Բաբայեանցին և նրա մահից յետոյ նոյն կերպով օգտվում է նրա Վասօն։

— Ինչո՞ւ է Հանդամէջի և Օրդուբաթի հայ հասարակութիւնը լռում և չէ դիմում ուր հարկն է։

— Հասարակութիւնը լսել է, որ տիկին Վասօն ինքնայօժար կամքով այս օրերս բանալիները յանձնելու է Օրդուբաթի ուսումնարանի հոգաբարձութեանը, որպէսզի նրանք հոգան ուխտատեղիի կարիքները և աւելացած արդիւնքը տան Օրդուբաթի ուսումնարանին։

— Հանդամէջցիք միթէ կը լռեն, որ իրանց ուխտատեղիի արդիւնքը Օրդուբաթ երթայ։

— Երկու հասարակութիւնները համերաշխ են գործում այս կէտում, շնորհիւ բարեմիտ անձանց։

Վերջինիս պատասխանը հաստատեցի ես։

Ն. Սիմէօնեանց

—

Մեժլիս (Նուխու գաւ.), 1 մայիսի

Ապրիլ ամսի 9-ին մեր գաւառի Եաղուփլու գիւղում յայտնի փախստական Բախիշ Նալբանդեանի խմբի հետ ունեցած անհաջող ընդհարման պատճառով մեր պրիստաւ Զայիդ-բէկին յայտնված էր բարձր իշխանութիւնից, որ շուտով նա պէտք է թողնէ Վարդաշէնի շրջանը, մի այլ գաւառում պաշտօն ստանձնելու։ Այս առիթով մեր եօթն հայ և թուրք հասարակութիւնները համախօսական կազմեցին, հաստատելով բոլոր ժողովրդի ստորագրութեամբ և տանուտէրների վաւերացմամբ ու անմիջապէս ուղարկեցին Գանձակի նահանգապետին, խնդրելով չը զրկել իրանց Զայիդ-բէկի նման բարեխիղճ և անկողմնապահ պաշտօնեայից։

Մեր գաւառապետը ձեռք է առել մի շարք միջոցներ փախստական Բախիշի խումբը ոչնչացնելու, որի համար կանչված են պաշտօնի մեր և այլ գաւառներից փորձված և «քաջ» թուրք անձնաւորութիւններ, կրելով հինգ-հարուածեան հրացաններ. սկսել են խումբ-խումբ շրջել անտառները և հայ գիւղերը։ Հրացանակիր քաջերից թուրք Ֆատալին անցեալ հինգշաբթի Փաղարի տանավաճառի ճանապարհին գնդակահար գտնվեց։

Ղօղլուի և մեր գաւառի մի քանի գիւղերում բուն դրած տիֆ հիւանդութիւնը տասն օրից ի վեր է չքացել է։ Մեր մասի Վարդաշէնի բժիշկը յաճախ այցելում է գիւղերը տիֆ հիւանդութեան լուրը տարածվելուց յետոյ, կարևոր դէպքում բժշկական օգնութիւն հասցնելու գիւղացիներին։

Այս տարի կանաչները լաւ ապագայ են խոստանում, առատ բերքի նշաններ են երևում. դժբաղդաբար, սերմի պակասութեան պատճառով, մեր գաւառի տասնեակ գիւղերում այն ընտանիքը, որ անցեալ տարի աշնանացան էր անում տասն թաղար (մի թաղարը=20 պ.), այս տարի ճարահատեալ բաւականացել է երկու կամ երեք թաղար ցանելով. բայց որովհետև, ինչպէս վերև ասացի, կանաչները լաւ են, եղածը պատճառում է մեր լքված գիւղացիներին ուրախութիւն։

Իսկ անասունների կեր բաւական կը ստացվի, զուր չէ որ գիւղացիք ասում են՝ «քարի ճակատին ևս խոտ է բուսել». այս բոլորին նպաստում են և տեղացող միապաղաղ անձրևները։

Հասել են գարնանացանի օրերը. մեզ մօտ սովորական բան է գարնանը կորեկ ցանելը, իսկ «հաճար» և գարնան գարի ցանում են ոչ բոլորը. սրանք երկրորդական և երրորդական տեղ են բռնում։ Անցեալ գարնան մեր և Արէշի գաւառում համարեա չը ստացվեց կորեկ, բացի 3—4 գիւղի մի քանի անհատների մօտ, որոնց ստացածները

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՒՐՈՊԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Ինկած տիպեր արտասահմանի հայութեան մէջ

—

Լոնդոն, 14 յունուարի

1895—6-ի արիւնոտ սարսափները, նետելով հայ համայնքէն հսկայ զանգուած մը Եւրոպա, բացի իրենց բարեբար արդիւնքներէն, ծնունդ տուին շատ մը չարիքներու հետ միասին տարրի մը, որ մինչև այդատեն անծանօթ մնացած էր մեր ցեղային պատմութեան։ Այս տարրը, որուն մասին պիտի խօսինք մեր ներկայ թղթակցութիւնով, միակը չէ իր յոռի վիճակին մէջ և դեռ կան ալ աւելի տգեղ կողմեր ևս մեր արտասահմանի հայութեան մէջ, որ այս անգամ գոնէ շօշափել չեմ ուզեր։

Այս տարրը արտասահմանցի հայերս կոչած ենք «խաչագողներ» անունով և, առանց զանազանութիւն դնելու իրենց վարմունքին կամ գործին, մեզի երևցած ամեն մէկ անօրինակ դէպք կանուանենք «խաչագողութիւն»։ Այս պաշտօնով զբաղողներու թիւը կարծուածէն շատ աւելի է Եւրոպա, բայց ամենն ալ ընկերական ու մտաւոր միևնոյն նժարին վրայ չեն։ Ոմանք այս «խաչագողութեան» դիմած են՝ շնորհիւ իրենց շահամոլ բնազդին, հնարելով իրենց համար անօրինակ միջոցներ այդ միտքը իրականացնելու, և, ըլլալով խելացի, հեռու պահած են ինքզինքնին, ստորիճան մը, ի հարկէ, պախարակման հաւանականութենէն։ Կայ այլ մաս մը, ծնունդ պարագաներու, պէտքի և շրջակայքի, որ, այս վերջին քանի մը տարիներս, անցնելով առաջին խաւերէն, վերածած է այս մասնաւոր արհեստի մը,—և կամ, եթէ ներելի է, գեղարուեստի մը,—ու պէտք է խոստովանիլ թէ օրէ օր պատուհաս մը դառնալ կը սկսի այս կամ այն դասին, ինչպէս նաև ընդհանուր հայութեան՝ իր անուղղելի գործքերով։ Ըսինք թէ մենք արտասահմանցիներս ամեն մէկ տարակուսելի գործունէութեան տէր անձ մը կը խարանենք «խաչագող» անունով և կը վերջացնենք։ Բայց ասոնք տեսակ մը դատարկապորտներ են, որ, ապրուստի դիւրին միջոց մը ստեղծելով իրենց համար, աշխարհի մէկ ծայրէն միւսը կը թափառին, գրպանին առանց սանթիմ մը ունենալու, իրենց բովանդակ յոյսն ու հաւատքը դրած ըլլալով իրենց անպատկառութեան վրայ—մուրալու, խնդրելու, շոյելու, սպառնալու—տեղին ու պարագային յարմար։

Մենք այսպիսի տարր մը չունէինք մեր մէջ արտասահմանի հայ գաղթումէն առաջ, որովհետև ասանկ արհեստ մը արժանիք կամ յաջողութեան հաւանականութիւն չունէր մեր ծննդավայրերը։ Ուրեմն այսպիսի տիպեր եկան արտասահմանի գաղութին հետ, և լաւ է որ քննենք անոնց ծննդեան շարժառիթները և, եթէ հնար է, ասոնց վերջ մը դնելու եղանակը խորհինք։ Եւ այս տարրը իր խեղութեան մէջ ծանօթացնելու համար ռուսահայ ընթերցողին, պէտք է որ յետադարձ տեսութիւն մը ընենք մեր արտասահմանի հայ գաղութին առաջին տարիներուն վրայ։

Երբ հայկական կոտորածները ծագեցան Թիւրքիոյ զանազան անկիւնները, ամեն դասի, նկարագրի ու սեռի պատկանող հայեր թափուեցան արտասահման, առհասարակ ամենամօտ երկիրները, ինչպէս Բուլգարիա, Ռումանիա, Եգիպտոս և այլն։ Այդ տարիներու այս երկիրներու քաղաքներէն ոմանց պարզած պատկերը հայ տարեգրութեանց ամենէն եղերականօրէն ծիծաղաշարժ էջերը պիտի կազմէ։ Հայութեան հասած անակնկալ պատուհասը իրականութեան մէջ շարք մը լիբբերու կոյտէ մէլօդրամայի կարգըն էր անցած։ Մէկ կողմ՝ շուարած, անօգնական, կեանքի նոր պայմաններու անվարժ, գութ շարժող հայ ամբոխ մը, ցաւալիօրէն տգէտ. միւս կողմ՝ ջոկատ մը ի ծնէ թոյլ, անխորհուրդ և կամ սրամիտ ու մնափառ սրիկաներու։ Ով որ այդ տարիներուն վերոյիշեալ երկիրներու գլխաւոր քաղաքները գտնուելու դժբաղդութիւնը ունեցած է, գիտէ խայտառակութեան ստուերները, որ տեղի ունեցան հոն։ Ճարպիկ ու հեռատես գործի մարդոց առաջին գործը եղաւ շահաւոր բանի մը ձեռնարկել և ապագան ապահովել։ Ոմանք սկսան այս հայերով վխտացող քաղաքներու այս ու այն անկիւնները շարք մը սրճարաններ բանալ ու զանոնք մկրտել ամենէ աչքառու ու նշանակալից հայ անուններով—«Հայկ», «Մասիս», «Սասուն», «Զէյթուն», «Արարատ» և այլն։ Եւ որովհետև գաղթողներու մեծամասնութիւնը իր գոյքերը այլանդակ գինով մը ծախելով անցած էր արտասահման, գրպանը փոքր գումար մը կը գտնուէր, հետևաբար այս սրճարանները դարձան ծուլանոցներ, ու բացողներն ալ չը զղջացին իրենց ձեռնարկին վրայ։

Այս շէնքերու մօդան յեղափոխութիւնն էր։ Ամեն մէկը յեղափոխական էր։ Կամ դաշնակցական և կամ հնչակեան։ Հայութեան անցեալն ու ներկան, ապառնին ու վերջը,—այո, նոյն իսկ տիեզերական քաղաքականութեան ճակատագիրները հոս ծուխի ու սուրճի գոլորշիներուն տակ խանդավառօրէն կը վճռէին։ Վա՜յ այն խեղճուկին, որ կը համարձակէր բառ մը ըսել յեղափոխութեան քննադատող։ Եթէ երբեք վիճակուէր սրճարանէն դուրս ցատքել ողջ, մարմնոյն մէկ մասը անտարակոյս պակաս էր կամ վիրաւոր։ Ու այս խայտառակութիւնները վիճակուած չէին լոկ «հակայեղափոխականներուն», այլ և հակակուսակցականներու եւս։ Դաշնակցական մը կը պախարակէ հնչակեանութիւնը, կամ vice versa, ու ահա սրճարանի այցելուները կը բաժնուին երկու բանակի, աթոռները կը բարձրանան, սեղանները կը գլորին, գաւաթներ ու շիշեր կը փշրին, մինչև ոստիկան մը կը մտնէ և կարգի կը դնէ մարտիկները։

Ուստի, այս յեղափոխական լինելու ախտը ծնունդ տուաւ մակաբոյծներու։ Ե՛ն մեծ սուտը խօսողը էն յարգելի անձնաւորութիւնն էր այս գումարումներուն։ Մինչդեռ ծերեր իրենց դիւանագիտական որոճումներով կը զբաղէին, երիտասարդներուն էր վիճակուած իրենց արևելեան սուր երևակայութեան ոյժ տալ և սուտերու նորընտիր տեսակները ստեղծել։

Մէկը կը պատմէր պատմութիւն մը, թէ ինչպէս տասնեակ սանդուխներէ վար ցատկելով յաջողած էր փախչիլ։ Երկրորդ մը կը պատմէր տակառի մէջ պահուըտիլն ու ողջ մնալը և նման ճարտար միտքեր։ Բայց յանկարծ կը ցատկէր ոտքի ուրիշ մը և համեմուած բառերով կը նկարագրէր իր արկածները, թէ ինչպէս իր քրոջ կամ այլ մօտ միևնոյն սեռէ ազգականի մը 15—20 թիւրք կամ քիւրդ արիւնարբուներէ առևանգուիլը կը տեսնէ, թէ ինչպէս դանակ մը բերանը և դանակ մը ձեռքը՝ կայծակնացայտ աչքերով կը յարձակի վրանին և բոլորը միասին մժեղներու երամակի մը նման փախցնելով և մէկ քանին ալ սպաննելով՝ զոհը կը փրկէ... Այս պատմութիւնը պակուցումի մէջ կը ձգէ հանդիսականները. պատմողը հասած է նպատակին։ Տեսարանին վերջին թատերական գոյն մը ևս տալու համար, ձեռքերը կոլորէ օդին մէջ, արտասովոր կերպարանք մը կառնէ, որպէս թէ դէպքին վերյիշումէն, և անտիպ ու անզուգական քֆրանք մը կը թողնէ Ըլդըզի պալատի տիրոջ։ Քանի որ մէկը չի համարձակէր ժխտել կամ գերադասել ըսածները, օրուան հերոսն է ան, և այդ հերոսի տիտղոսով իրաւունք ունի ամեն տեղ մուտք գործել, և ամեն ոք ալ պարտաւոր է իր բոլոր անտանելի մրուրներէն տոկալ՝ հերոս մը ըլլալուն և, աւելին, հիւրընկալել զինքը։

Իսկ ուրիշներ, իրենց երևակայութեան վրայ չվստահելով, ինքզինքնին ներկայացուցին «պատրաստ շինուած» հերոսներ, մէկը ձևանալով Արխանեան, միւսը Մինաս Օղլու, ուրիշ մը Զէյթունի կամ Սասունի այս կամ այն «հերոսը», և որովհետև, ինչպէս յայտնեցի, յեղափոխութիւն և հերոսութիւն օրուան մօդաները էին, ասոնց համար շատ դժուարութիւն չկար և ապրուստի շատ հաճելի միջոցներ գտած էին։ Սակայն այս խաղքութիւնները յաւիտեան շարունակուիլ սահմանուած չէին։ Օր մըն ալ հասաւ հակահարուածը, հիասթափումը։ «Մոսկովին, Ինգիլիզին, Ալմանին, Իտալիային կամ Աւստրիային» վրայ դրուած յոյսերը,—որ սրճարանեան տարիքոտ դիւանագէտները ազատօրէն կը վճռէին ու աւելի երիտասարդ «մտաւորականներու» մտածելու նիւթ կը մատակարարէին՝ հայ ապագայ զօրաբանակներու հանդերձներուն կամ մարտական հրամանները գրաբառ թէ աշխարհաբառ տալու մասին, չյիշելով դեռևս այն հակաճառութիւնները՝ Ալիշանի «Բամբ որոտանը» թէ Սմբատեանի «Առեք հայկազունքը» հայ ազգային պաշտօնական երգը ընդունելու նկատմամբ,—չիրականացան երբեք։ Իսկ ասկէ աւելին, ակնկալուած հայոց թագաւորութիւնը չգալով մէկտեղ, իրենց գրպանն ալ պարպուած էր։ Խելք ունեցողներ, դեռ բոլորովին ուշ չեղած, գործի սկսան. ուրիշներ, ոռնալով իրենց քֆրանքի ու անէծքի հառաչանները, վերադարձան տեղերնին, իսկ ճանչցուած «հերոսներն» ալ տեսնելով որ այլևս կեր չկայ այդ կողմերը, նետուեցան աայնքան քիչ են, որ, համարձակ կարող եմ ասել, հազիւ մի գիւղին (բաղկացած ոչ աւել 100 ընտանիքից) բաւականութիւն տայ։ Այն էլ չը տեսնված և չը լսված գներով են ձեռք բերում. մի Թաղարը (18 պուդ) 48—50 ր. հաշւած։

Ռուսաստանի կորեկից խօյս են տալիս, հաւատացնելով շատերը՝ թէ նրան ցանելու գիտաւորութեամբ տուածը կորած պէտք է համարել։

Անջրդի վարելահողերում սկսել են ցանել բամբակի սերմ և սեխ ու ձմերուկ, որոնք այսպիսի տարիներում հիանալի արդիւնք են տալիս։

Մարխաւոր իշխանութիւնից ակնկալված հացահատիկները մինչև օրս չեն ստացված. շատ գիւղացիներ տնային անհրաժեշտ իրերի և անասունների վաճառումով կերակրում են իրանց ընտանիքը, իրանց գոյութիւնը ապահովելու մինչև առաջիկայ հունձը, որը տեղի կունենայ մեզ մօտ ուղիղ մի ամսից յետոյ։

Մահուր

Յ. Գ.—Նամակս վերջանալուց յետոյ լուր հասաւ, որ մեզ մօտիկ սովի դուռը հասած Զայքէնդ գիւղին Ղայաբաղու տանուտէր Ստեփանի միջոցով յայտնված է իրանց տրվելիք հացահատիկների մասին, որի հիման վրա երէկ Զայքէնդի ժողովուրդը սայլերով ճանապարհվեց Աղդաշ, գաւառապետի և հաշտարար միջնորդի ներկայութեամբ ստանալու իրանց բարձրագոյնս բաց թողնված հացի պաշարը այն չափով, որով կը կարողանան մինչև առաջիկայ հունձը ապահով մնալ։

Համաձայն ղայաբաշեցի Յովհաննէսի և Զաքարիայի մեղադրանքի, ամբողջ մէկ և կէս տարի Գանձակի և Նուխու բանտում արգելված մնալուց յետոյ, այսօր, մայիսի 18-ին, Նուխու քաղաքային բանտից ազատ են թողնվում յայտնի եղբայրներ Թադէոս և Պաւլական Բաղալեանները ու Արշակ և Ստեփան Մուրադեանները։

Նոյնը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի փուռն հաց թխողները խնդրում են մեզ տպագրել հետևեալը. «Թիֆլիսի քաղաքային դումայի այս մայիսի 3-ի որոշման համաձայն, հացի սակագինը պակասեցնելու առիթով, մենք, Թիֆլիսի հացթուխներս, մեր խորագոյն հնազանդութիւնն ենք յայտնում սահմանված սակագինը ընդունելու, եթէ քաղաքի պ.պ. հայրերը մեզ ալիւր տան մատչելի գներով։ Թանգութիւնը առաջանում է ոչ մեր մեղքից, այլ պահեստատէրերի, որոնք ալիւր են վաճառում, կամ զանազան ջրաղացների պ.պ. գործակալների մեղքից։ Այդօրինակ արգելքները վերացնելով, մենք յօժարութեամբ կընդունենք և կը հպատակվենք բոլոր օրինական վճիռներին»։

◆ Զանազան քաղաքներից ստացված տեղեկութիւնների համաձայն, մսի գները բաւականաչափ ընկել են։ Այսպէս, Գանձակում միսը ծախվում է 10 կ. ֆունտը, ասկին՝ 12 կոպէկով։ Նկատի առնելով այդ հանգամանքը, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը և տնտեսական մասնաժողովը հարց են յարուցում պակասեցնելու մսի գինը գոնէ մի կոպէկով, ևս առաւել որ այժմ գոյութիւն ունեցող սակագինը որոշված էր միայն 2 շաբաթով։

◆ «Т. Л.»-ին հեռագրում են Պետերբուրգից, որ աջակողմեանները կովկասի գործերի մասին իրանց հարցապնդումը Դումայում ներկայացնելու են վաղը, ուրբաթ օրը։

◆ «Վտակ» լրագրի խմբագիրը Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կողմից ենթարկվել է 1000 րուբլի տուգանքի։

◆ Ինչպէս հաղորդում է «Гол. Кавк.» լրագիրը, Թագաւոր Կայսրը Թիֆլիսի ռուսաց հայրենասիրական ընկերութեանը նուիրել է իր պատկերը։

◆ Մօտ օրերս Թիֆլիս է գալու պօստ-հեռագրական գլխաւոր գրասենեակի տեսուչ Ն. Դովեակովսկին Թիֆլիսի պօստ-հեռագրական գրասենեակում վերաքննութիւն կատարելու համար։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը պատուիրագրել է բոլոր պրիստաւներին խիստ հսկողութիւն ունենալ, որ էլեքտրաքարշի երթեւեկութիւնը կատարվի վերջին պայմանագրի համաձայն, այսինքն մայիսի 1-ից մինչև սեպտեմբ. 1-ը վագոնները դուրս գան առ. ժամը 6 և կէսին և մեկնեն գիշերվայ ժամը 12-ին։ Այս կանոնը խախտելու դէպքում արձանագրութիւններ կազմել և ներկայացնել իրան։

◆ Ստացանք Մօսկվայից պ. Մովսէս Շահնազարեանից 100 րուբլի՝ Լէօի յօբելեանական յանձնաժողովին յանձնելու համար։

◆ Ստացանք Մ. Տալախչեանի «Թարգմանական Մեղեդիներ» (Նադսոնից, Լերմօնտովից, Հայնէից և ուրիշներից), Ալեքսանդրօպօլ, 32 էջ, գինը 5 կոպէկ։

◆ Ժողովրդական համալսարանում, Զուբալօվի ժողովրդական տանը (Կիրօչնի փողոց), ուրբաթ, մայիսի 9-ին Ս. Արծրունին ռուսերէն լեզուով կը դասախօսէ «սրիկայութեան» մասին։ Դասախօսութեան սկիզբն է ցերեկվայ ժամը 11-ին։ Տոմսերի գինը 5—10 կոպէկ։

◆ Ստացանք Էրնեստ Ռընանի «Յիսուսի կեանքը», Թարգմ. Վ. Վարդանեանի, 209 երես, գինն է 1 րուբլի։

◆ Մայիսի 6-ին, երեկոյեան մօտ 10 ժամին, Մազուտի միջանցքում № 3 տանը բնակվող վաճառականի բնակարանում անյայտ չարագործներ պայթուցիկ նիւթ էին ձգել, որից ջարդվել է 8 ապակի։ Տէր-Աբրահամեանը ստացել է մի սպառնական նամակ, որով պահանջել են 2000 րուբլի։ Շնորհիւ ձեռք առած միջոցների, Տէր-Աբրահամեանի բնակարանի մօտ ձերբակալված են 3 անյայտ անձեր, որոնք իրանց անուանել են ալեքսանդրօպօլցիներ Իվան Արտեմով, Հմայեակ Աբրահամեան և Դենիվիսիօն Ասատուրօվ. խուզարկելու ժամանակ առաջին երկուսի մօտ գտել են 2 դաշոյն, իսկ 3-րդի մօտ—լօմ։

◆ Նաւթլուղի շրջանում կառուցվող Կախէտինսկի խճուղու ուղղութիւնը փոխել են։ Ճանապարհը սկզբնական ծրագրով պէտք է թեքվէր դէպի զինւորական հիւանդանոցը. այժմ կուղղվի դէպի երկաթուղագծի՝ հիւսիս-արևելեան կողմը և կանցնի նախագծվող երկաթուղային կայարանի մօտով։

◆ Քութայիսի գեն.-նահանգապետը արգելել է Քութայիսի արական միջնակարգ դպրոցների աշակերտներին թատրոններ յաճախելը։

◆ Բաթումում հիմնվելու է «աշխատանքի բորսա»։

◆ Ախալցխայի քաղաքային ուագը, քաղաքային լիազօրների ժողովի որոշման համաձայն, միջնորդել է Կովկասի բարձր իշխանութեան առաջ, որ Ախալցխա քաղաքին, նրա ֆինանսական սուղ դրութիւնը նկատի առնելով, պետական գանձարանից 2500 րուբլի տրվի՝ խօլերայի դէմ միջոցներ ձեռք առնելու համար։

◆ Թիֆլիսից անակնկալ կերպով Սարիղամիշ գնացած պօստային պաշտօնեան, քննութիւն կատարելով տեղական պօստ-հեռագրական գրասենեակում, երևան է հանել 22 հազար րուբլու վատնում։ Վատնումի հեղինակ պաշտօնեայ Չ. հեռացված է պաշտօնից։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մայիսի 5-ին, երեկոյեան ժամը 9-ին, Վօկզալի հրապարակում, էլեքտրաքարշի կայարանի մօտ մի անյայտ չարագործ պօրուչիկ Մ. Ամիրաղօվի գրպանից հանել է ոսկէ ժամացոյց 150 րուբլու արժողութեամբ։ Չարագործը անյայտացել է։

◆ Մայիսի 6-ին Գ. Վասիլևը յայտնել է ոստիկանութեան, որ իր բացակայութեան ժամանակ նրա վերնասրահից գողացել են հիւսնի գործիքներ 50 րուբ. արժողութեամբ։ Շնորհիւ ձեռք առնված միջոցների, գողացված իրերից մի մասը գտել են տեղացի Աղալօ Տէր-Մխրդեանի մօտ. Գողութեան մէջ մեղադրվող 10 տարեկան տղաներ Լևոն Տէր-Մեսրոպեանը և Արշակ Կարապետեանը ձերբակալված են և նրանք խոստովանեցին իրանց յանցանքը։

◆ Մայիսի 6-ին, գիշերվայ մօտ 12 ժամին, երկաթուղային գծի մօտ 3 անյայտ չարագործներ յարձակվել են նոր-բայազէտցի Արտեմ Մուրիչեանի վրա և խլել են 8 րուբլի, որից յետոյ սկսել են փախչել. չարագործներից մէկը՝ Մ. Տատալաձէն ձերբակալված է, իսկ միւս երկուսը անյայտացել են։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Լեռնային դեպարտամենտի տեղեկութիւնների համաձայն անցեալ մարտ ամսվայ ընթացքում Բագուի նաւթահանքերում ստացվել է 38,367,000 պուդ նաւթ, որից՝ 10,767,000 պ. Բիբի-Էյբաթում. բացի դրանից ֆօնտանից ստացվել է նոյն ժամանակամիջոցում 707,000 պուդ։ («Сл.»)

◆ Թուրք դիրասան Ի. Գասպրինսկուն իր յօբելեանի առիթով Նուխի քաղաքի հայերի կողմից ուղարկված է հետևեալ հեռագիրը. «Հայ ինտելիգենցիան շնորհաւորում է ձեր 25-ամեայ գրական գործունէութիւնը, անկեղծաբար աջողութիւն ցանկանալով ձեզ մեր եղբայրների՝ մուսուլման ժողովրդի լուսաւորութեան համար»։

◆ Մայիսի 5-ին վլադիկավկազեան առաւօտեան գնացքով Բագու են եկել Վօրօնեժի հոգևոր դպրոցի 80 սաներ երեք ուսուցիչների ուղեկցութեամբ։ Էկսկուրսանտները գնացել են Բալախանի նաւթահանքերը տեսնելու։ Բագուից նրանք պիտի գնան Սուրամ՝ ամարանոց։

◆ Բագուի բարեգործական ընկերութեան նախաձեռնութեամբ երեխաների ապաստարանի համար կազմակերպված ժողովրդական զբօսանքները քաղաքային Միքայէլեան այգում բազմաթիւ հանդիսականներ են գրաւում։ Գործի նիւթական աջողութիւնը ապահովված կարելի է համարել։ Ամեն օր նուագում է զինուորական երաժշտական խումբը։ Վիճակախաղերը և միւս խաղերը անցնում են նոյնպէս աջող։ Զբօսանքները շարունակվելու են էլի մի քանի օր։ Այնուհետև կարճատև ընդմիջումից յետոյ կը սկսվի զբօսանք յօգուտ մուսուլմանների «Նիջաթ» ընկերութեան։

◆ Մայիսի 5-ից գիմնազիայում սկսվել են աւարտման քննութիւնները։ Առաւօտեանից վաղ միջոցներ էին ձեռք առնված։ Շինութեան մէջ մտնել թողնում էին միայն պաշտօնավոր անձանց և քննութիւն տուողներին։ Գիմնազիայի մօտ վաղ առաւօտից խռնված քննութիւն չը տուող գիմնազիստներին թաղական վերահսկիչները չէին թողնում ներս մտնելու։ Դարպասի մօտ՝ ներսում և դրսից կանգնած էին ոստիկանները։ Ոչ մի միջադէպ չէ պատահել։

◆ Մտադրութիւն կայ Բագւում բանալ Օդեսսայի ղրիմօ-կովկասեան լեռնային կլուբի բաժանմունք։ Ինժեներներ, ուսուցիչներ և ուրիշ ինտելիգենտ անձինք, 39 հոգի, ցանկութիւն են յայտնել նրա վարչութեանը անդամ գրվել. դրա հիման վրա էլ դիմում է արված բաժանմունք բանալու համար։

– Սանիտարական բժիշկները ներկայումս պատրաստվող պաղպաղակների վրա լուրջ ուշադրութիւն են դարձրել։

◆ Բագուի սպառողական ընկերութիւնը, որ իր սեփական մագազինն ունի Ալեքսանդրօ-Նեվսկի շարքերում, մայիսի 10-ից վերջ է տալիս իր գոյութեանը։ Դրա համար արդէն մասնաժողով նշանակված է։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ինչպէս հաղորդում են, Պուրիշկեվիչը պատրաստվում է Կովկաս գնալ կովկասեան գործերի առիթով աջակողմեանների հարցապնդումի մասին նիւթեր հաւաքելու։

◆ «Русь» լրագիրը հաղորդում է, որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Շաուֆուսի Լեհաստան գնալը անսպասելի կերպով չէ կայանում. Հաւանական է համարվում նրա հրաժարականը։

◆ Մի նոր կուսակցութիւն է կազմակերպվում, որի մէջ մտնելու են հոկտեմբերեանների ձախակողմեան և կադետների աջակողմեան թևի ներկայացուցիչները։

◆ Կազմվում է մի նախագիծ երդուեալ-հաւատարմատարների օգնականներին ազատելու ժամաւոր հաւատարմատարի վկայական ձեռք բերելու ընտրութիւնից։ («Зв.»)

◆ Մօտ օրերս առևտրի և արդիւնաբերութեան մինիստրը ուղևորվում է Ռուսաստանի զանազան քաղաքներ անձամբ ծանօթանալու առևտրի և արդիւնաբերութեան դրութեան հետ և իրանց տեղերում ծանօթանալու այն միջոցների հետ, որոնք պէտք է ձեռք առնվեն նրանց զարգացման համար։ («Р. В.»)

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը թոյլ է տուել աջակողմեան մամուլի համագումար հրաւիրելու Մօսկվայում մայիսի 16—20-ը։ Այդ համագումարում մտադրութիւն կայ քննութեան ենթարկել մայրաքաղաքներում երեք մեծ լրագիր հրատարակելու և գիւղական շրջաններում տարածելու համար միջոցներ որոնելու հարցը։ Սօյուզնիկները յոյս ունեն, ինչպէս ասում են, արքունական յայտարարութիւնների տպագրութեան մենաշնորհը ստանալ այդ թերթերի համար։ («Р. В.»)

◆ Առաջադէմ կանանց ընկերութեան խորհուրդը որոշել է դիմել Պետական Դումային յայտնելու, որ ցանկալի է կանանց իրաւունք վերապահել մասնակցելու տեղական քաղաքային և զեմստվային ինքնավարութիւններին, նոյնպէս և կանանց նշանակելու գործարանական ինսպեկտօրների պաշտօններում այն մասերում, ուր կին բանւորուհիներ շատ կան։ («Р. В.»)

◆ Մինիստրների խորհրդի նախագահը իր շնորհակալութիւնն է յայտնել Եկատերինօսլաւի բանւոր վարչութեանը անկարգութիւնները աջողութեամբ ճնշելու համար։ («Кс.»)

◆ Աստրախանի նահանգապետը մեղադրանք է յարուցել Ա. Ի. Դուբրօվինի դէմ, «Рус. Знамя» լրագրի մի շարք համարներում իր գործողութիւնների մասին սուտ և զրպարտիչ յօդուածներ տպագրելու համար։ («Слово»)

◆ Ապրիլի 26-ին ռուս ժողովրդի միութեան Պետերբուրգի բաժանմունքի թէյարանում ծառայողի մօտ ոստիկանութիւնը գրաւել է 40 շիշ օղի։ Ծառայողը բացատրել է, որ մենակ ինքը չէ միութեան թէյարաններում գաղտնի օղեվաճառութեամբ պարապում և որ դա ոչ մի վատ բան չէ համարվում իրանցում։ («Сов. Сл.»)

◆ Ֆինլանդիայում կին-չինօվնիկների թիւը օր օրի վրա աճում է։ Լրագիրների ասելով, Ագնեսս Լունդելին սենատի երկրագործական դիւանագրի պաշտօնավար նշանակելու մասին յարուցված հարցի առիթով, սենատը որոշել է առաջարկել օր. Լունդելին խնդիրք տալ թոյլատուութիւն ստանալու այդ պաշտօնը ստանձնելու համար։ («Сов. Сл.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Մայիսի 5-ի նիստի շարունակութիւնը)

Նիստը բացվում է ժամը 4 և 42 րօպէին։

Հերթում դրված է առևտրի մինիստրութեան էսմտի նախահաշիւը, որ կազմել է բիւջէտային մասնաժողովը։

Զեկուցանող Գօդնէվը պաշտպանում է մասնաժողովի առաջարկած բանաձևը։

Բարօն Տիզենհաուզեն, հոկտ. 17-ի միութեան ֆրակցիայի յանձնարարութեամբ, հետևեալ կարծիքներն է յայտնում տնտեսական ընդհանուր քաղաքականութեան հարցերի վերաբերեալ,

«Բիւջէտային մասնաժողովը վկայում է, որ վարչութիւնը գործում է առանց պլանի. առևտուրը և արդիւնաբերութիւնը պետութեան կենսունակ նեարդն է. մեր բոլոր քաղաքական կօմբինացիաները և ամենահումանիտար բարենորոգումները ոչնչանում են քաղցած ստամոքսի պահանջների առաջ։ Մեր քաղցածութիւնը, ծարաւութիւնը և մերկութիւնը սովորական ճշմարտութիւն են դարձել։ Մեր պետական տնտեսութիւնը գլորվում է թեք մակերևոյթի վրայով, և ժողովրդական ներկայացուցչութեան պարտքն է տալ ժողովրդական աշխատանքին մի այնպիսի ուղղութիւն, որ ընդունակ լինի բարձրացնել նրան և դնել պատշաճ բարձրութեան վրա։

«Մեր բոլոր թշւառութիւնների հիմնական պատճառը ժողովրդական ընդհանուր թըշւառութիւնն է։ Ազգասիրութիւնը սկզբունք պէտք է ծառայէ պետական տնտեսութեան բոլոր ձեռնարկութիւններում, բայց, ի հարկէ, առանց ծայրայեղ ազգասիրութեան—իր շօվինիզմով և մեծամտութեամբ։ Մեր ռուսական ազգասիրութիւնը պէտք է հիմնված լինի լայն խելացի համբերատարութեան սկզբունքների վրա։ Անհրաժեշտ է դիմել արդիւնաբերութեան բոլոր տեսակների զարգացմանը, լցնելով ներքին շուկան նրա մթերքներով և՝ հնարաւորութեան չափով՝ արտաքին շուկաները։ Դէպի այդ ճանապարհն է մեզ մղում ահագին աճումը ազգաբնակութեան, որը ժողովրդական աշխատանքի լայնացումն է պահանջում։

«Մեր հայրենիքը ընկած է մուրճ-Եւրոպայի և զնդան-Ասիայի միջև։ Ռուսաստանին վիճակված է դեր խաղալ ցեղերի կռւում, կուլտուրաների մրցութեան մէջ։ Այդ դերը պարտաւորեցնում է մեզ որոշ տնտեսական անկախութիւն և ինքնագնահատութիւն ստեղծել։ Մենք պէտք է հոգանք մեր գաղութների մասին։

«Թւանշաններով ցոյց տալով Ռուսաստանի ազգաբնակչութեան և նրա ազգագրական առանձնայատկութիւնների բնորոշումը, հռետորը մատնանշում է գիւղատնտեսութեան և արդիւնաբերութեան շահերի անհամակերպումը։ Միայն շատ քիչ գիւղացի ընտանիքներ կարողանում են իրանց հողերի եկամուտներով ծածկել ծախքերը։ Կառավարութեան ամենառաջին հերթական հոգսը պէտք է հայրենի արդիւնաբերութիւնը բարձրացնելու հոգսը լինի։ Բանւորական օրէնսդրութիւնը, խիստ կերպով ասելով, առևտրի արդիւնաբերութեան նախահաշւի նկատմամբ ամենահետաւոր յարաբերութիւն ունի։ Հաւանօրէն աշնան նստաշրջանում Դուման հնարաւորութիւն կունենայ պարզաբանվել այդ հարցի վերաբերութեամբ, որի խոշորութիւնը պետական, տնտեսական և սօցիալական տեսակէտներից աներկբայ է և որը նախահաշւի վիճաբանութիւնների ժամանակ զուգընթաց լուծում ստանալ չէ կարող։

«Բանւորական օրէնսդրութիւնը պէտք է քննվի երկու տեսակէտներից—պետական շահերի և արդիւնաբերութեան շահերի։ Բանւորների և տէրերի փոխադարձ յարաբերութիւնների մէջ պետութեան չը միջամտելու սկզբունքը արդէն ընդունված է մեր յառաջ օրէնսդրութեան հիմունքում և բանւոր դասակարգերը կարող են հանգիստ կերպով և վստահօրէն նայել իրանց ապագային։

«Անհրաժեշտ է, որպէսզի աշխատաւոր-բանւոր դասակարգերը այնպիսի պայմաններում դրվեն, որ նրանք ազատ ճանապարհ ունենան մտաւոր զարգացման և իրանց հասարակական-քաղաքացիական պարտականութիւնը կատարելու համար։ Թոյլատրելի չեն աշխատանքի այն պայմանները, որոնք քայքայում են աշխատաւորներին, ստեղծում են անհօրմալ կացութիւն, հիւանդութիւն, վաղաժամ ծերութիւն և մեծ թւով մահացութիւն։ Արդիւնաբերութիւնը և արդիւնաբերողը միևնոյն բանը չեն։ Պետական նշանակութիւն ունեն ինչպէս աշխատաւորների շահերը, այնպէս և արդիւնաբերութեան շահերը։ Ընդհանուր առմամբ աշխատաւորների շահերը և արդիւնաբերութեան շահերը միմեանց [illegible] չեն։ Օրէնսդրական ճանապարհով պէտք է սահման դրվի շահախնդրութեան և կամայականութեան։ Կը կամենայի, որ Ռուսաստանը բոլորի դաշնէն տարած «բոլոր երկիրների պրօլետարներ միացէք» աղաղակի փոխարէն, իր լօզունգը դնէր՝ «կորչի պրօլետարիատը»...

«Մեր սօցիալական և տնտեսական դրութեան սկզբնական պատճառ հանդիսանում է գիւղատնտեսութեան քայքայումը։ Նրա նախապատճառը թաքնված է նրանում, որ մեր երկրագործ դասակարգը ապրում է դեռ բնական տնտեսութեամբ, մինչ նրանից դրամական պահանջներ են ներկայացնում։ Մեր թշուառութեան այդ ցաւալի պատճառը պէտք է վերացնել. մեր թշուառութեան ելք հանդիսանում է արդիւնաբերութեան զարգացումը։ Որոնենք ո՛չ հովանաւորութիւն, ո՛չ արտօնութիւններ. ցանկանանք միայն մի բան—որ մեր ձայնին վերաբերվեն զգայուն և կենսունակ կերպով, որ մինիստրութիւնը գործով ցոյց տայ, թէ նա գոյութիւն ունի ազգաբնակութեան համար և ոչ թէ ազգաբնակութիւնն է նրա համար։ Հեռու չէ այն ժամանակը, երբ Ռուսաստանի բնակիչը կը գնահատէ «ժամանակը—փողն է» ասացուածքը։

«Այդպէս, մեր կարծիքն է. մինիստրութիւնը պէտք է առաջին հերթում իր գործունէութեան համար վստահութեան և կենսունակութեան մթնոլորտ ստեղծէ. ապացոյց տայ, որ նա ճանաչում է լիրաւի ազգաբնակութեան տնտեսական գործունէութեան ազատութեան սկզբունքը. իրան նպատակ կը դնէ՝ հեռացնել այդ գործունէութեան աճմանը արգելառիթ բոլոր իրերը։ Մեր առևտրա-արդիւնաբերական օրէնսդրութիւնը իր շատ մասերում հնացել է. սակայն այդ շրջանում արդէն շատ բան է արված։ Ուստի և քաղաքականութեան այդ շրջանի վրա մենք կարող ենք նայել որոշ հանգստութեամբ»։

Յայտարարվում է միջդադար։

Երեկոյեան ժամը 8 և 46 րօպէին նիստը վերսկսվում է. նախագահում է իշխ. Վօլկօնսկին։

Հերթում դրված է ֆինլանդական գործերի հարցապնդումների մասին ներկայացրած յայտարարութեան քննութիւնը։

Մինիստրական օթեակումն են մինիստրների խորհրդի նախագահը, արդարադատութեան, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրները, պետական հսկիչը, ռուսաց սինօդի օբեր-պրօկուրօրը, ներքին գործերի մինիստրի օգնականներ՝ Մակարօվը և Կրիժանօվսկին, ֆինլանդական գեներալ-նահանգապետ Բէկմանը։

Հարցապնդումների մասնաժողովի զեկուցանողն է Գօլօլօբօվը։

Մասնաժողովը հարկաւոր գտնելով ասել, որ ֆինլանդական գործերի մասին մտցրած հարցապնդումները նպատակ ունենն պարզելու Ֆինլանդիայի և պետութեան այլ մասերի յարաբերութիւնները և ամրապնդելու նրանց մէջ պետական շա-

---

ելի անծանօթ և հարուստ անկիւնները Եւրոպիոյ։ Ասոնցմէ ոմանք ունէին ամեն ընդունակութիւն գործելու և ոմանք ալ համեստ երիտասարդներ էին, բայց լեզուի տգիտութիւնը և տեղական պայմաններու օտարութիւնը հարկադրեցին զիրենք դիմել այս կամ այն ունեւոր հայուն՝ իրենց օգնելու։ Առաջին տարիներուն, ասոնց թիւը որքան ալ մեծաքանակ, անօրինակ [illegible] մը կար հայութեան բոլոր խաւերէն՝ ասոնց օժանդակելու կերպով մը,—«հերոս» թէ ոչ-հերոս։ Այս պարագան առիթ տուաւ ոմանց առաջին խնդրանքը երկրորդելու, երրորդելու, մինչև որ քաղաքն ալ պժգանք զգաց և պարտաւորուեցաւ մերժել, որուն վրայ պաղատանքն ու խնդրանքը փոխուեցան պահանջի և սպառնալիքի։ Ասոնց թիւը հետզհետէ բազմացաւ, այնպէս որ այսօր հսկայ բանակ մը ունինք Եւրոպա, շատ աւելի անպատկառ ու անամօթ քան նախորդ տարիները, և որոնք կանուանենք, ինչպէս յայտնեցի թղթակցութեանս սկիզբը, «խաչագողներ»։

Ասոնցմէ իւրաքանչիւրը եղած է Ամերիկայի այլ և այլ քաղաքները ու եւրոպական քօնթինէնթի մէկ ծայրէն միւսը և նոյնիսկ չեն ուզեր գլխաւոր մայրաքաղաքներէն հեռանալ։ Կեդրոննին Պարիզ է, բայց երբ «հունձքի» նուազութիւն տեսնէ, կը ցատկեն Լօնդօն, Լօնդօնէն Մանչեստր կամ Լիվրպուլ, այնտեղէն կրկին Լօնդօն, Լօնդօնէն Վիեննա, Վիեննայէն Զուիցերիա կամ այլ հայագաղութ վայր մը և կրկին Պարիզ։ Այս բոլորին ալ, կարծես մասնաւոր նշանով մը, իրար անմիջապէս կը ճանչնան և կօգնեն իրարու ու կառաջնորդեն։ Գիտեն թէ որ քաղաքին մէջ քանի հայ հարուստ կայ և ուր է անոնց վաճառատունը։ Պարիզ դրամ հաւաքած միջոցնին կը յայտնեն, որ մտադիր են Լօնդօն անցնիլ, հոնկից ալ կերպով մը Լիվրպուլ կամ Մանչեստր, և ճանապարհածախս մը ճարելով մինչև Ամերիկա։ Անդիրքնին կը յաջողի. կուգան Լօնդօն. միևնոյն պատմութիւնը կրկնեն հոս, այս անգամ կամ Պարիզ և կամ Մանչեստր երթալու համար, և այսպէս, յաւիտենապէս, կերթան ու կուգան, անվերջ ու անծայր։ Երբ մերժում ստանան՝ կը սպառնան, կը պախարակեն։ Մասնագիտութեան փոխած են զայն։

Եւրոպահայ գաղութին այս տգեղ կողմը երկար ժամանակէ ի վեր ինծի նիւթ ընելով, շատ մօտէն քննած եմ, և պէտք է անկեղծօրէն ըսել, որ խիստ ցաւալի պատկեր մը կը ներկայացնէ։ Մեծամասնութիւնը գործունեայ և համեստ մարդիկ եղած են ժամանակին, բայց, պարագաները նետելով զիրենք այս կեանքին մէջ, դարձած են կեանքէ յոգնած ու անտարբերներ։ Ոմանց օգնութեան հասնելով իրենց բնածին ծուլութիւնը՝ աւելի խոր մղած է այդ պժգալի կենցաղին մէջ, ու ասոնց երեսէն՝ շատ մը իրապէս օգնութեան արժան մարդիկ, անմարժ անոնց լրբութիւններուն, կուգան Եւրոպա ու իրենց կը մերժուի ամենափոքր օժանդակութիւն, որովհետև յայտնի չէ լաւն ու յոռին ու կարգ մը սրիկաներու ու դատարկապորտներու շնորհիւ կը զոհուին պարկեշտ դժբաղդներ։

Պարիզ գտնուած միջոցիս, ասոնցմէ շատերու կեանքին հետ ծանօթանալու բաղդը ունեցայ—անցեալ թէ ներկայ—ու ես կը հաւատամ, որ մեր ապագայ սերունդներուն համար աւելի ցաւալի պատկեր մը չունինք տալու։ Այս բոլորին սերտօրէն կապուած անբարոյականութեան աննկարագրելի ճշմարտութիւնները՝ իրականութիւնը կրկնակիօրէն վշտալի կը դարձնեն, որուն համար Պարիզ կը հայթայթէ լայն ասպարէզ։

(Կը շարունակվի)

Մինաս Ցոլակ

հերի տեսակէտից անհրաժեշտ տեղական կապակցութիւն, որ անկասկած օգուտ կը բերէ հէնց իրան, Ֆինլանդիային,—գտնում է, որ հարցապնդումները պէտք է քննել առանձին-առանձին, իրաւունք տալով հարցապնդումների հեղինակներին զեկուցանել նրանց բովանդակութիւնը մանրամասնօրէն։

Զեկուցագրի ընթերցման ժամանակ լըցվում են ոչ միայն հասարակութեան համար յատկացված տեղերը, այլ և դիպլոմատիական ժարինի, Պետական Խորհրդի, սենատորների և ռուսաց ու օտարազգի մամուլի օթեակները։

Իր զեկուցագրի վերջում զեկուցանողը մատնանշում է, որ ի զուր շատերը կարծում են, թէ հարցապնդումների հեղինակները ուղղում են այդ հարցապնդումները որևէ կուսակցական նպատակներից դըրդված։ «Ո՛չ, հարցապնդում ուղղելու հրամայողական պատճառներ ծառայեցին ռուսաց ազգային զգացմունքը վիրաւորելու և ռուսաց ազգային արժանապատւութիւնը չըյարգելու վերաբերութեամբ եղած ցուցմունքները։ Վաղուց մամուլի մի որոշ մասը ջանում է ռուս հասարակութեան և ռուս ժողովրդին հակաազգասիրական զգացմունքներ ներշնչել։ Անգամ այս ամբիոնից ասվեց, որ ազգը—նախապաշարմունք է, իսկ ես դիմում եմ ձեզ, ռուսաց ամբողջ ազգին, և կամենում եմ այս բարձր ամբիոնից բարձրաձայն գոչել—մի հաւատա ռուս ազգ, մի հաւատա ռուս ժողովուրդ այդ պատիր վարդապետութեան, այդ թունաւորված խօսքերին. Նրանք կապականին քո ուղեղը և հոգին և քեզ կործանման դուռը կը հասցնեն... (ծափահարութիւն աջակողմում)։ Ազգը—նախապաշարմունք չէ, ազգը հարազատ մայր է, ազգը, որ կապված է մայրենի հողի պատմութեան հետ,—հայրենիքն է (ծափահարութիւն), իսկ հայրենիքին և ազգին պէտք է սիրել, ինչպէս հարազատ մօրը, նրա բոլոր առաւելութիւններով և պակասութիւններով հանդերձ, պէտք է սիրել ամբողջ գաղափարով, ամբողջ էութեամբ։ Միմիայն այդօրինակ անձնազոհ սէրն է, որ ծանր տարիներին փրկել է պետութիւնը և դրդել է ժողովուրդներին և առանձին անհատներին՝ քաջագործութիւններ կատարել, զոհվել ու մեռնել։ Հազարաւորներ անտրտունջ մեռել են հայրենիքի փրկութեան համար (ծափահարութիւն աջակողմում)։

«Ունենալով առ հայրենիքն սիրոյ այդպիսի հասկացողութիւն, ես խորապէս յարգում եմ միւս բոլոր ազգութիւնների—դէպի իրանց սեփական ժողովուրդը, դէպի հայրենիքը տածած սէրը, Ռուսաստանի բոլոր ցեղերի՝ դէպի սեփական ազգն ունեցած սէրը։

«Մենք, հարցապնդման կողմնակիցներս, չենք ցանկանում ոչ Ֆինլանդիային, ոչ որևէ ուրիշ ժողովրդի ճնշել, չենք ցանկանում ձեռն մխել ոչ ոքի ազգային զգացմունքին, ոչ ոքի իրաւունքին, չենք ցանկանում ոչ ոքի խանգարել խաղաղութեամբ աշխատելու իր ազգի օգտին, սակայն ցանկանում ենք, որ ռուս ազգին էլ չը խանգարեն խաղաղ աշխատելու, որ ռուս ազգին էլ չը ճնշեն, ինչպէս գիտենք և տեսնում ենք մենք շատ տեղերում։

«Ռուսաստանում բնակվող ազգերի բոլոր տարաձայնութիւնները և հակաճառութիւնները պէտք է քննութեան ենթարկվեն այստեղ, այս դահլիճում—պատմական դատաբանի դահլիճում։ Թող այստեղ գան և ասեն թէ ում ինչ է հարկաւոր, և մենք խղճմտանքով կը քննենք, թէ ով ինչ է ստանալու, ում ինչ պէտք է տալ։ Բայց մենք կամենում ենք, որ չը վերցնեն յափշտակութեամբ կամ խորամանկ, ծածուկ ճանապարհով. չենք կամենում, որ կորցնեն պետութեան հիմնական հիմնաքարը։ Մենք կամենում ենք ամրապնդել պետութիւնը, ցանկանում ենք, որ երկգլխանի արծիւը վերստին բարձրացնէր խրոխտաբար իր գլուխը, որ ամօթալի կերպով ցածրացրել է փորձութեան տարիներում. որ վերստին ամրանար այդ վեհ գլուխների վրա նրանց պսակող թագը, որ վերստին մեր արծիւը լայն կերպով տարածէր իր թևերը և հաւասար կերպով հովանաւորէր Ռուսաստանի ժողովուրդներին. որ սրանք թողնելով պետութեան աւտոնոմ կազմակերպութեան մտորումները, աշխատէին իրանց օգտի համար, սակայն միաժամանակ աշխատէին միակ, անբաժանելի ռուսական պետութեան հզօրութիւնը ստեղծելու, նրան ամրապնդելու և կատարելագործելու համար» (ծափահարութիւն աջակողմում)։

Զեկուցանողից յետոյ մի երկար ճառ է արտասանում մինիստրների խորհրդի նախագահը մի ամբողջ և կէս ժամ շարունակ։ Նրա ճառը, որ յաճախ ընդհատվում էր ծափահարութիւններով, կը տրվի առանձին։

Ստոլիպինից յետոյ մի երկար ճառ էլ արտասանում է աջակողմեան հռետոր Զամըսլովսկին, որ նկարագրում է Ֆինլանդիայի վերջին տարիների յեղափոխական շարժման պատմութիւնը։

Նիստը փակվում է գիշերվայ ժամը 12-ին։ («Հ. Գ.»)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 6 մայիսի

Թոյլ եմ տալիս ինձ հայ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել մի վերին աստիճանի անմարդասէր և իր կոչման անհամապատասխան անձնաւորութեան մի վարմունքի վերաբերմամբ, որը եզակի չէ մեր հասարակական կեանքի մթնոլորտում։

Ամսիս 5-ին, առաւօտեան ժամը 8½-ին, օրիորդաց 3-րդ գիմնազիայի ռուսաց լեզուի ուսուցիչ Մ. Կագանի կեանքի դէմ մահափորձ կատարելու ժամանակ՝ պատահմամբ մահացու վէրք է ստանում նոյն գիմնազիայի 8-րդ դասատան աշակերտուհի Ե. Նասիբեանը։ Դէպքի տեղից 20—25 քայլ հեռաւորութիւնից, երբ լսեցի ատրճանակի հարուածները, յետ դարձայ օգնութեան հասնելու վիրաւորին։ Նախ քան վիրաւորուհու վէրքը կապելը՝ խոհեմութիւն համարեցի դիմել մասնագէտ բժշկի, քանի որ մի քանի քայլ հեռաւորութեան վրա գտնվում էին 3—4 բժիշկներ։ Իսկոյն գնացի բժ. Ի..ի տուն. այդ ժամանակ նրա հիւրասենեակում կանգնած էր իմ նախկին ծանօթ բժ. Ղազազեանը, որը իմ հարցին՝ «եթէ կարելի է, բժ., շտապեցէք օգնելու վիրաւորին»—պատասխանում է. «Լաւ կը լինի, եթէ դիմէք իրան բժ. Ի..ին, քանի որ գտնվում է իր կաբինեթում և կարող է իր հետ վերցնել վիրաբուժական մի քանի իրեր»։ Բայց ո՜րպիսի հիասթափութիւն, երբ դիմելուց յետոյ բժիշկ Ի..ին ստանում եմ մի լակոնական, բայց ջղեր ցնցող պատասխան—«Что я могу дѣлать?» Ես, ի հարկէ, առանց մի վայրկեան կորցնելու, ցած եմ իջնում սանդուղքներից և դիմում բժ. Գօնիեվին, որը վայրկենապէս ինձ հետ մեկնում է դէպքի վայրը. հէնց այդ ժամանակ և գալիս է բժ. Ղազազեանը, որը երևի տեսնելով իր «պարտաճանաչ» կօլլեգի այդ «մարդասէր» վարմունքը՝ եկել էր մասամբ մեղմացնելու վերոյիշեալ միջնադէպը։ Վիրաւորուհու վէրքը կապելուց յետոյ Թաղային ոստիկանի հետ կառքով փոխադրեցինք Միքայէլեան հիւանդանոց, որտեղ դժբաղդ օրիորդը առանց ուշքի գալու աւանդում է հոգին։

Ատամնաբոյժ՝ Յովհաննէս Կէօնճեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ

100,000 գործադուլներ Լօնդօնում.—Արդէն 15 շաբաթ է, որ շարունակվում է անգլիական նաւաշինարանների բանւորների գործադուլը, որոնք հրաժարվել են աշխատելու դուրս գալ, որովհետև գործատէրերը իջեցրել են բանւորական օրավարձը։ Մի շարք գործարաններ, որոնք զբաղված են նաւաշինութեան գործով, այժմ պարապ կանգնած են։ «Board of Trade»-ի նախագահի բոլոր ջանքերը հաշտեցնելու երկու կողմերը ապարդիւն անցան։ Վերջին օրերս թէև յոյս էր նկատվում, որ բանւորները զիջումն կանեն, բայց ահա հէնց այդ միջոցին գործատէրերը իրանց կողմից «լօկաուտ» յայտարարեցին։ Այժմ հանդէս է գալիս արդէն բոլորովին նոր ֆակտոր՝ մեքենայաշինարանների բանւորների սինդիկատը, որի անդամների թիւը 110 հազարից պակաս չէ և իր տրամադրութեան տակ ունի 20 միլիոն ֆրանկ գումարի մի ֆօնդ։

Մեքենայաշինարանների այդ սինդիկատը Նիւ-Կեստլում պէտք է մշակէ գործողութեան եղանակը բանւորների և գործատէրերի միջև ծագած կօնֆլիկտը լուծելու համար։

ԻՏԱԼԻԱ

Ագրարական անկարգութիւններ.—Պարմի շրջանում ագրարական հողի վրա լուրջ անկարգութիւններ են սկսվել։ Իտալիայի գիւղատնտեսական բանւորների միջև դժգոհութիւններն ու խլրտումները գոյութիւն ունեն շատ վաղուց. նրանք երբեմն առ երբեմն լարվելով փոխվում են սօցիալական պատամբութեան ընդդէմ կալուածատէրերի և հողային կապալառուների։

Ներկայումս այդ շարժումը վերսկսվել ու բռնկել է ամբողջ Պարմի շրջանը, որի մասնակցողների թիւը հասնում է 50,000 հոգու։

Կառավարութիւնը ամենայն օր նոր զօրքեր է ուղարկում այնտեղ։ Պարլամենտի պատգամաւորները ամեն ջանք գործ են դնում հանգստացնելու բորբոքված կրքերը, սակայն իտալական մի քանի լրագիրների տոնից նկատվում է, որ դրութիւնը վատթարանում է։ «Perseveeanza» լրագիրը հաղորդում է, որ կառավարութիւնը վճռել է Պարմի շրջանը պաշարողական դրութեան մէջ դնել, եթէ որ լուրջ անկարգութիւններ սկսվեն, իսկ արիւնահեղ ընդհարումներ մի քանի տեղերում արդէն պատահել են մի կողմից՝ գործադուլարարների, որոնց թւում կան բազմաթիւ կանայք, և միւս կողմից՝ շտրէյկբրեխերների միջև, ինչպէս այդ երևաց հեռագիրներից։ Երկիւղ են կրում, որ շարժումը կը տարածվի նաև հարևան շրջանները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

6 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը ամենաողորմածօրէն շնորհեց Սպիտակ Արծուի շքանշան՝ Վարշավայի գեներալ-նահանգապետ Սկալօնին, Վլադիմիրի երկրորդ աստիճանի՝ Մոսկվայի գեներալ նահանգապետ Գերշէլմանին, Ս. Աննայի առաջին կարգի՝ Սինօդի օբէր պրօկուրորի օգնականին, կամերհէրի կոչում՝ Բագուի նահանգապետի պաշտօնակատար Ալիշէվսկուն, Վլադիմի առաջին կարգի շքանշան՝ Պետական Խորհրդի անդամ օբէր-հոֆմարշալ իշխան Դոլգորուկովին։

Պրինց Ֆերդինանդը և պրինցեսսա Մարիան մեկնեցին արտասահման։

ՄՈՍԿՎԱ։ Համալսարանական խորհուրդը կին բժիշկ Դօնչակօվին թոյլ տուեց դասախօսութիւններ կարդալ հիստոլօգիայի մասին իբրև պրիվատ-դոցենտ։

Արտաքին

7 մայիսի

ՎԻԷՆՆԱ։ Պատգամաւորների պալատի նիստը։ Պահպանողական ռուսին Խլէբովիցկին բողոքեց երիտասարդ ռուսին Պետրիցկու վերջին նիստում արտասանած խօսքերի դէմ, իբրև Գալիցիայի փոխարքայի ըսպանութիւնը հետևանք է ռուսինների վրա ճնշում գործ դնելուն։ Խլէբովիցկին ասաց, որ ռուսին ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը դատապարտում է ամեն տեսակ ըսպանութիւն, ինչպէս և առհասարակ ամեն տեսակ տերրոր։

ԼՕՆԴՕՆ։ Րէյտէրի գործակալութեանը Սիմլայից հեռագրում են, որ Չեմուլպօյում, արտաքին առևտուրի համար հաստատված նաւահանգստի տարեդարձի առիթով կայացաւ շքեղ տօնախմբութիւն, ուր ներկայ էր նաև մարկիզ Իտօն, որ ճառ արտասանեց։ Իր ճառով մարկիզ Իտօն ընդգծեց Եապօնիայի խաղաղասիրական քաղաքականութիւնը դէպի Կօրէան և ասաց, որ Կօրէան ապագայում անկախ լինելու համար պէտք է դաշնակցութիւն կնքէ Եապօնիայի հետ։ Ճառը ընդունվեց կօրէացիների և եապօնացիների կողմից ցնծագին ծափահարութիւնով։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—46

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վէլեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Շ.) 100—63

ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Հատոր Ա. Հին Եկեղեցին
Հիւսեց
Երուանդ վարդ. Տէր-Մինասեան
Ս. Էջմիածին, 1908
XII+390. Գինն է 1 ռուբլի
Ճանապարհածախսով 1 ր. 25 կոպ.։
Դիմել Էջմիածին, Երուանդ վարդապետին։
(Կ. Հ. Կ.) 3—1

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Պրէյսկուրանտն ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмянного Хозяйства Квеесъ и К-о
Тифлисъ, Михайловск. пр. № 55.
25—23

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ՄԵՂԵԴԻՆԵՐ
Գինն է 5 կոպ.
Դիմել՝ Թիֆլիս «Փարոս» գրախանութը կամ Александрополь, учителю М. Тарахчіанъ.
3—1

Առաջիկայ դպրոցական տարվայ ընթացքում իմ դասագրքերս պիտի վաճառվեն հետեւեալ պայմաններով.
1) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ ա. տ., նոր տիպ. բազմաթիւ նոր պատկերներ. գրութեան նոր օրինակներ տպագրին զուգընթաց. ու, իւ, յ տառերի համար նորաձեւ տառեր, որոնք փարատում են բոլոր դժուարութիւնները. գինը 20 կոպէկ. գումարով 13 կոպէկ։
2) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ երկրորդ տարի, նոր տիպ. գինը քառասուն կոպէկից իջեցրած է 30 կոպ., գումարով 20 կոպ.։
3) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ երրորդ տարի, նոր տիպ. բովանդակութիւնը ճոխացրած. հայկական մասը բոլորովին վերամշակված (նիւթեր հայի առտնին կեանքից, սովորութիւններից, աւանդութիւններից, գիւղական կեանքից և այլն). գինը 50 կ., գումարով 35 կոպ.։
4) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ չորրորդ տարի, ազգային բաժնով (նիւթեր հայի անցեալից ու ներկայից. մեր նախահայրերը—Հայաստանը, նրա նահապետները, առաջին լուսաւորիչները, տառերի գիւտը, լեզուն, հինգերորդ դարի հայերը, հայ կանայք, հին տունը, հին ուսումնարանը, նիւթեր նորագոյն ժամանակներից). գինը 55 կ., գումարով 38 կոպ.։
5) ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ քերականութեան տարերք բազմաթիւ վարժութիւններով. գինն է 50 կ., գումարով 35 կ.։
6) ՀԵՑԵԻԻ՝ Թուաբանական խնդիրների ժողովածու, առաջին և երկրորդ տարվայ համար. գ. 35 կ., գումարով 20 կ.։
7) Նոյնը՝ երրորդ տարի. գ. 50 կ., գումարով 25 կոպէկ։
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Николаевскій мост. фотографія Теръ-Гевондяна; օտարաքաղաքացիք՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля։ Միեւնոյն պայմաններով վաճառվում են Թիֆլիսի միւս գրավաճառների մօտ։
Նիկողայոս Տէր-Ղևոնդեան
(Հ.) 4—1

Լոյս տեսաւ
Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Դիմել հեղինակին՝ Эчміадзинъ, Іоаннесу Іоаннисіану.
(օ.մ.) 10—3

Առևտրական դպրոց
Կառավարչական իրաւունքներով
Վերատեսուչ հիմնադիր
Յ. Զ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ
1-ին և 2-րդ դաս. ընդունել. քննութիւնները միջակ. դպր. ծրագրով մայիսի 30 և 31-ին
Հաշուապահութ. դաս. կուրսեր
Կօօպերատիվ ընկ. հովանաւորութեամբ
աւարտել է Ս.-Պ. Բ. կոմմ. բարձր կուրսերը
Պարապմունքների սկիզբը մայիսի 15-ից
Կուրսերի վճարը 60 ռուբլի
Թիֆլիս, Աւճալեան փողոցի սկզբին՝ 1-ая Тумановская ул. с. д. № 13.
(Կ. Հ. Կ.) 5—2

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդայի ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կլէյմօն ունի իր վրա։
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԷՆՏՈՒՄ
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՈԼԴ ՆԵՑՇԵԼԼԵՐ"
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ.
ԱՅՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ եւ Ասպէտուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ. (Հ. Կ.) 100—25

Типографія „[illegible]" Заказа [illegible]
[illegible] № 3.